

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի անվանում՝ Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագիր. Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կողմից Բազրատաշենի պետական սահմանի անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցում.

Երկիրը – Հայաստան, Վրաստան

Բիզնես հատվածը - Տրանսպորտ

Ծրագրի ID - 43826

Մրցույթի իրականացման No. - 3954871.

Մրցույթի իրականացման անվանումը – Բազրատաշենի պետական սահմանի անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի նախագծում և շինարարություն

Պատվիրատու՝ - Հայաստանի Հանրապետություն և Վրաստան

Ծանուցման տեսակը - Հետաքրքրության հայտի հրավեր՝ երկու փուլ

Գնման բնույթ՝ Աշխատանքներ

Գնումների ընդհանուր ծանուցման հրատարակում՝ - 16/03/2016 15:50

Թողարկման ամսաթիվ՝ 27/07/2016 09:00

Փակման ամսաթիվ՝ 20/09/2016 09:00

Պատվիրատուները վերոնշյալ ծրագրի համար համատեղ օգտագործելու են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից տրամադրվող վարկային միջոցները: Գնումների գործընթացը իրականացվելու է ՎԶԵԲ-ի գնումների քաղաքականությանն ու կանոններին համապատասխան:

**Տինանսավորման մանրամասներ.**

Ծրագրի իրականացման նպատակով կօգտագործվեն ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցները: Կամրջի նախագծման և կառուցման աշխատանքների իրականացման ֆինանսավորումը կբաշխվի երկու Պատվիրատուների վարկային միջոցների հաշվին: Պատվիրատուն կֆինանսավորի վարկային միջոցների հաշվին իրականացվող գործարքներից առաջացող անուղղակի հարկերը՝ ԱԱՀ-ն:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցները չեն կարող օգտագործվել որևէ վճարման կամ ապրանքների ձեռքբերման համար, եթե նման վճարումը կամ ձեռքբերումը արգելվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, Միավորված ազգերի կանոնադրության VII գլխի և Պատվիրատու երկրների օրենսդրության կամ պաշտոնական կանոնադրության համաձայն:

Վերոնշյալ մրցութային գործընթացը հասանելի է ցանկացած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների համար:

**Պատվիրատուն այժմ մրցույթ է հրավիրում վերոնշյալ պայմանագրի (երի) համար:**

**Փաթեթ # CW-SBB\_01, Բազրատաշենի կամրջի նախագծում և կառուցում**

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ) և Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունը (Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտ), (Գործատու և /կամ Գործատուներ) մտադիր են օգտագործել Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (Բանկի) կողմից տրամադրվող վարկի միջոցները Մադալալո-Բազրատաշեն սահմանային անցակետի նոր կամրջի նախագծման և կառուցման իրականացման ֆինանսավորման համար:

Դեբեդ գետի վրա նոր կամրջի նախագծման և շինարարական աշխատանքները ներառում են, նոր կամրջի նախագծում և կառուցում: Այն պարունակում է երկու առանձին թռիչքային ծածկ, որոնք միացնելու են Դեբեդ գետի հայկական կողմի առկա սահմանային անցակետի ենթակառուցվածքը վրացական կողմի ենթակառուցվածքին: Կամուրջը անցնելու է Դեբեդ գետի և վրացական հատվածում գործող երկաթգծի վրայով:

Պայմանագիրն ակնկալվում է մեկնարկել 28/12/2016թ-ին, ընդհանուր ժամանակահատվածն է՝ 42 ամիս, ներառյալ նախագծման և շինարարության 18 ամիսը, և թերությունների վերացման ժամանակահատվածի 24 ամիսը:

**Կիրառվում է երկփուլանի մրցութային ընթացակարգ, որը կընթանա հետևյալ կերպ.**

(ա) Մրցույթի առաջին փուլը բաղկացած կլինի միայն տեխնիկական առաջարկից, առանց որևէ գնային հղումների, և մրցութային փաստաթղթերում սահմանված տեխնիկական և կոմերցիոն պայմանների ցանկացած շեղումներից, կամ այլ այլընտրանքային տեխնիկական լուծումներից, որը մրցույթի մասնակիցը ցանկանում է առաջարկել դրանց հիմնավորումներով, պայմանով, որ դրանք չեն փոխի ծրագրի հիմնական նպատակները: Առաջին փուլի առաջարկները գնահատելուց հետո պատվիրատուն պարզաբանման հանդիպման կհրավիրի մրցույթի յուրաքանչյուր մասնակցի, ով բավարարում է որակավորման չափանիշները և ով ներկայացրել է տեխնիկապես համապատասխան հայտ: Մրցույթի բոլոր նման մասնակիցների առաջարկները կվերանայվեն հանդիպման ընթացքում, և բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, լրացումները և այլ ճշգրտումները կնշվեն և կարձանագրվեն:

Միայն որակավորված մասնակիցները, ովքեր առաջին փուլում ներկայացրել են տեխնիկապես համապատասխան և ընդունելի հայտ, կիրավիրվեն մասնակցելու երկրորդ փուլին:

(բ) Մրցույթի երկրորդ փուլը բաղկացած կլինի թարմացված տեխնիկական հայտից, ներառելով Գործատուի կողմից պահանջվող բոլոր փոփոխությունները, համաձայն պարզաբանման հանդիպման ընթացքում արձանագրված, կամ, անհրաժեշտության դեպքում, արձանագրված որևէ փոփոխություն մրցութային փաստաթղթերում, որոնք սրբամաղրվել են մրցույթի առաջին փուլի հայտերը ներկայացնելուց հետո և կումերցիոն հայտից:

**Առաջին փուլի հայտերը պետք է ներկայացվեն վերը նշված ամսաթվին և ժամանակին:**

Սույն մրցույթը կիրականացվի էլեկտրոնային գնումների միջոցով՝ օգտագործելով ՎՋԵԲ-ի էլեկտրոնային գնումների հարթակը (ECEPP): Հետաքրքրված հայտատուները պետք է գրանցվեն ECEPP-ում՝ այս հղման միջոցով՝ <https://ecepp.ebrd.com/respond/G48PQZB992> և արտահայտեն իրենց հետաքրքրությունը մրցույթին: Ամբողջական պայմանները ներառված են Մրցութային փաստաթղթերում (մրցույթի տվյալների բաժնում)

Հավանական մասնակիցները, ովքեր գրանցվել են ՎՋԵԲ-ի հաճախորդների էլեկտրոնային գնումների հարթակում և հետաքրքրության հայտ են ներկայացրել կարող են օգտվել մրցութային փաստաթղթերից անվճար և պահանջել պարզաբանում և հետագա տեղեկատվություն պատվիրատուից ՎՋԵԲ-ի հաճախորդների էլեկտրոնային գնումների հարթակի միջոցով:

**Այլ տեղեկատվություն.**

Կապալառուի նախագիծը պետք է համապատասխանի մրցութային փաստաթղթերում ներառված տեխնիկական ստանդարտներին և նորմերին: Ցանկացած վիճարկվող խնդիր պետք է լուծվի մրցութային փաստաթղթերում նշված չափանիշներին համապատասխան: Մրցույթին մասնակցող ընկերության փորձառության բացակայության դեպքում ընկերությունը կարող է մասնակցել համատեղ ձեռնարկության գործընկերություն այլ ընկերությունների հետ: Նման դեպքերում մրցութային փաստաթղթերը պետք է ներառեն մասնակցող ընկերության և համատեղ մասնակցող ձեռնարկության միջև կնքված համաձայնագիրը՝ նշելով յուրաքանչյուր գործընկերոջ տվյալները, ինչպես նաև որ ընկերությունն է համարվում առաջատար գործընկեր և բաժնեմասերի բաշխումը գործընկերների միջև: Մասնակից կողմերը պետք է հստակ սահմանեն, որ համատեղ ձեռնարկության բոլոր գործընկերները գործատուի նկատմամբ պայմանագրի շրջանակներում համատեղ և առանձին կրում են պատասխանատվություն:

**Կամրջի շինարարությունը կիրականացվի պայմանագրի շրջանակներում՝ կապալառու և երկու գործատուներ:**

**Պատվիրատուի հասցեն՝**

Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարություն  
Ծշուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն և ՊՈԱԿ  
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Պուշկինի 58  
Հեռ. +374 (60) 50 68 70  
Կոնտակտային անձ՝ Էռնա Ամիրխանյան – Գնումների և պայմանագրերի կառավարման մասնագետ  
Էլեկտրոնային հասցե՝ [erna.amirkhanyan@nouthsouth.am](mailto:erna.amirkhanyan@nouthsouth.am)

Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն

Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտ

Հասցե՝ Վրաստան, Թբիլիսի 0160, Ալ. Կազբեգի փ. 12

Հեռ. +995 (322) 37 05 08

Կոնտակտային անձ՝ Լուկա Մոսաշվիլի - Արտասահմանյան ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ  
Էլեկտրոնային հասցե՝ [luka.mosashvili@georoad.ge](mailto:luka.mosashvili@georoad.ge)